

Թեմա 4. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԵՎ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏ

Ողջույն, ֆինանսական կրթության դասընթացի շրջանակներում այսօր խոսելու ենք բանկային հաշիվների վարման և վճարային քարտերի մասին:

Բիզնեսի գրանցումից և հարկ վճարողի հաշվարկային հաշիվ բացելուց հետո հաջորդ քայլը բանկում ֆիզիկական անձի (ԱԶ) կամ իրավաբանական անձի համար բանկային հաշիվ բացելու գործընթացն է:

Ընդհանուր առմամբ, բանկային հաշիվը բանկի կողմից առաջարկվող ընթացիկ, քարտային, խնայողական, ավանդային, վարկային և այլ հաշիվներն են:

Բանկային հաշիվ բացելու գործընթացը շատ պարզ է: Եթե որոշել եք, թե որ բանկի հետ եք համագործակցելու, ապա անհրաժեշտ է այցելել այդ բանկի մասնաճյուղերից մեկը, լրացնել հաշիվ բացելու դիմում, ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր և կնքել համապատասխան պայմանագիրը: Որոշ բանկեր տալիս են նշված գործողություններն առցանց կատարելու հնարավորություն ևս:

Հիշեք, որ ցանկացած փաստաթուղթ ստորագրելուց առաջ այն պետք է ուշադիր կարդալ և ծանոթանալ բոլոր պայմաններին:

Որպես կանոն, հաշիվ բացելու պայմանագիրը կնքվում է մի քանի օրինակից, որոնցից մեկը տալիս են ձեզ. անպայման պահե՛ք այն: Պայմանագրի կնքումից հետո բանկում բացվում է բանկային հաշիվ այն արժույթով, որը դուք ընտրել եք: Ի դեպ, կարող եք հաշիվներ բացել մի քանի արժույթով, եթե պլանավորում եք արտահանման կամ ներմուծման գործարքներ կատարել:

Դուք կարող եք ունենալ նաև **քարտային հաշիվ**: Դա ընթացիկ բանկային հաշվի տեսակ է, երբ հաշվին կցվում է նաև վճարային քարտ: **Վճարային քարտը** գործիք է, որը հնարավորություն է տալիս՝

- ստանալ դրամական միջոցներ,
- բանկերից և բանկոմատներից կանխիկացնել գումար,
- կատարել վճարումներ առևտրի և սպասարկման կետերում մատակարարվող ապրանքների կամ ծառայությունների դիմաց,
- իրականացնել ինտերնետային առևտուր, կատարել գնումներ արտասահմանում,
- կատարել և ստանալ քարտից քարտ փոխանցումներ,

- պարբերաբար ստանալ հաշվի քաղվածքներ և հետևել ֆինանսական վարքագծին՝ վերլուծելով, օրինակ, թե ինչ ծախսեր եք կատարել, որոնք կարելի է կրճատել և այլն:

•

Ծանոթանանք վճարային քարտերի տեսակներին:

Ըստ նպատակայնության՝ վճարային քարտերը լինում են.

- Վարկային - (նաև կրեդիտային քարտ). Այս տեսակի քարտերը նախատեսված են բանկի կողմից վարկի ձևով տրամադրված դրամական միջոցները օգտագործելու համար, այդ թվում՝ կանխիկացնելու, առևտրի և/ կամ ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու համար:
- Դեբետային - Այս քարտն օգնում է առանց բանկ այցելելու կառավարել և օգտագործել բանկային հաշվի վրա առկա **սեփական** միջոցները: Հիմնականում տրամադրվում է այն ժամանակ, երբ ցանկանում եք օգտագործել դրամային միջոցները, որոնք մուտքագրվել են ձեր բանկային հաշվին, ինչպես նաև քարտի միջոցով ամենատարբեր գործարքներ՝ անկանխիկ վճարումներ և փոխանցումներ կատարել, ինչպես նաև ցանկացած պահի կանխիկացնել գումարը:
- Հաշվարկային - Քարտի այս տեսակը միավորում է դեբետային և կրեդիտային քարտերի հատկանիշները:

Եթե քարտն օգտագործելու եք միայն էլեկտրոնային գնումների համար, ապա կարող եք ձեռք բերել **վիրտուալ քարտ**, որի դեպքում դուք ստանում եք առցանց հաշիվ ու քարտային տվյալներ, գրանցում եք դրանք առցանց հարթակում և կատարում գնումներ:

Վճարային քարտերի շուկայում կարող եք հանդիպել նաև «Կանխավճարային նվեր քարտերի», «Ուսանողական» և այլ քարտերի տարատեսակների, որոնք հիմնականում աշխատում են դեբետային քարտերի սկզբունքով:

Մինչև քարտի ընտրությունը ծանոթացեք յուրաքանչյուր տեսակին, հասկացեք, թե Ձեր բիզնեսի համար ո՞րն է առավել նպատակահարմար՝ հաշվի առնելով սպասվող գործարքները: Շուկայում եղած առաջարկները համեմատելու և ընտրելու համար կարող եք օգտագործել www.fininfo.am կայքը:

Քարտերը դասակարգվում են նաև ըստ վճարային համակարգի.

Հայաստանում լայնորեն շրջանառվում է ինչպես տեղական «ԱրՔա» (ArCa) քարտը, որը կիրառելի է միայն Հայաստանի տարածքում, այնպես էլ միջազգային «ՄաստերՔարտ» (MasterCard), «Վիզա» (Visa), «Ամերիքան Էքսպրեսս» (American Express) քարտերը, որոնք կարող եք օգտագործել արտասահմանում, ինչպես նաև արտասահմանյան կայքերից գնումներ կատարելիս:

Ըստ օգտագործման տեխնոլոգիայի՝ քարտերը լինում են.

Մագնիսական քարտ. պատված է մագնիսական ժապավենով, և տեղեկատվությունը գրանցվում է մագնիսական եղանակով:

Չիպային քարտ. այս քարտի հիմքում միկրոսխեման է, որը թույլ է տալիս գրառել ավելի շատ տեղեկատվություն, քան մագնիսական ժապավենի վրա: Սա առաջատար տեխնոլոգիայով քարտ է, որը կեղծելու և ապօրինի օգտագործելուց խուսափելու առումով ավելի անվտանգ է:

Հիբրիդային քարտը նախորդ երկուսի միավորումն է, երբ քարտի վրա առկա է ն՝ միկրոսխեմա, և՛ մագնիսական ժապավեն:

Անհատների դեպքում՝ 14 տարեկանից սկսած հնարավոր է ձեռք բերել վճարային քարտեր: Իհարկե 14-18 տարեկան անհատների դեպքում նման գործարքներն իրականացվում են ծնողների և խնամակալների համաձայնությամբ, իսկ ավելի փոքր տարիքի երեխաների համար ծնողներն ու խնամակալները կարող են բանկից պատվիրել իրենց քարտային հաշվին կցված քարտեր՝ ընտանիքի բոլոր անդամների անուններով:

Մինչև քարտի ձեռքբերման մասին վերջնական որոշում կայացնելը, ծանոթացեք նաև ենթադրվող միանվագ և ընթացիկ վճարներին: Այդպիսիք են.

- քարտի թողարկման/տրամադրման վճարը,
- տարեկան սպասարկման վճարը,
- հաշվի շարժի մասին հաղորդագրության (SMS) ծառայության տրամադրման վճարը,
- հավելյալ/կից քարտի պահանջի հնարավորությունը և համապատասխան վճարը,
- կարճ ժամկետում քարտի տրամադրման պայմանները,
- քարտի կորստի, գողության, վնասման, PIN կոդի մոռացության դեպքում քարտի վերաթողարկման պայմանները,

- այլ բանկերի բանկոմատներից կանխիկացման պայմանները,
- քարտի արգելափակման և ապաարգելափակման և այլ վճարները:

Վճարային քարտերի ապահով օգտագործման նպատակով դրանք ունենում են PIN կոդեր: PIN կոդը վճարային քարտի անվտանգության և նույնականացման գործիք է, որն անհրաժեշտ է բանկոմատից գումար կանխիկացնելու և POS տերմինալով վճարումներ կատարելու ժամանակ:

Ձեր քարտային հաշվում առկա միջոցները երրորդ անձանց կողմից օգտագործելու հավանականությունը բացառելու համար չի կարելի ասել կամ տրամադրել PIN կոդն այլ անձանց: Ի դեպ, ձեր քանտի PIN կոդը չգիտեն անգամ բանկի աշխատակիցները: Պետք չէ նաև պահել PIN կոդը քարտի հետ:

Քարտային պայմանագիրը կնքելիս ձեզ խնդրում են ընտրել գաղտնաբառ, որը բանկը կարող է ձեզ հարցնել սպասարկման ժամանակ՝ ձեզ նույնականացնելու համար: Հնարավոր է նաև՝ այն պահանջվի քարտային գործարքներ կատարելիս որոշ կայքերում գրանցվելու ժամանակ:

Ոչ մեկի մի՛ հայտնեք ձեր բանկային գաղտնաբառը՝ բացառությամբ բանկի աշխատակցի, ով անվտանգ հեռախոսագրույցի ժամանակ, նույնականացնում է ձեզ՝ գործարք կատարելու, և անվտանգ կայքերում քարտի տվյալները մուտքագրելու համար:

Լրացուցիչ անվտանգության ապահովման համար վճարային քարտի դարձերեսին առկա է նաև CVV կոդ: Այս կոդն օգտագործվում է առցանց գնումներ կատարելու ժամանակ՝ քարտի նույնականացման նպատակով:

Բանկային հաշվի հեռավար կառավարման համար օգնության են հասնում **հեռախոսային և ինտերնետ բանկինգ ծառայությունները**, որոնք ակտիվացնելով դուք կարող եք առանց բանկ այցելելու պարզապես ձեր հեռախոսում ներբեռնված բանկի հավելված կամ կայքէջ մուտք գործելու միջոցով իրականացնել տարբեր գործարքներ: